

դարձեալ միշտ երկրիս առանցքին զուգահեռական է :

Հարաւային ու հիւսիսային ըսուած արեւու ժամացոյցներն ալ միջօրէի գծին ուղղահայեաց մակարդակներու վրայ գծուած են :

Ըրեւելեան ու արեւմտեան ըսուածներն ալ՝ միջօրէին մակարդակին վրայ գծուած են . բայց սլաքը նոյն մակարդակին զուգահեռական է . որով ասոր ձգած շուքին գծերն ալ իրարու զուգահեռական են : Ըրաւօտը ժամը արեւելեան կողմի երեսին վրայ կը ցրցունէ . կէսօրը արեւը անմիջապէս մակարդակին եզերքին վրայ կը զարնէ , կէսօրէն ետեւ արեւմտեան կողմը :

Բւեռային ըսուած արեւու ժամացոյցը հասարակածին տակ եղած երկիրներուն հորիզոնական ժամացոյցն է :

Թէ որ արեգակնային ժամացոյց մը կ'ուզես շինել, ձեռքդ աղէկ ժամացոյց մը առ ե նախ ուզած արեւու ժամացուցիդ սլաքը շիտակ դէպ 'ի բւեռ ուղղէ , ետքը ժամացուցիդ վրայ նայելով ըստ իւրաքանչիւր ժամուն ու վայրկենին , սլաքին ձգած շուքին ուղղութեամբ գծեր քաշէ . այս գծերը Ժահան գիծ՝ կ'ըսուին , վասն զի ետքէն ժամը կը ցուցնեն :

Մէկ արեգակնային ժամացուցի մը սլաքը երկրիս առանցքին ուղղութեամբ հաստատելէն ետեւ , ժամական գծերը կրնաս նաև գիշերահաւասարային ըսուած արեւու ժամացուցով ալ գտնել :

Ըրեգակնային ժամացոյցները գիշերներն ալ կրնան լուսնի լուսով ինչ ժամ ըլլալը ցուցնել , բաւական է որ ճիշդ գիտնաս թէ լուսինը նոյն գիշերը ատեն միջօրէէն կ'անցնի :

Հ . Հ . Գ

Ա Ռ Ա Կ

Խեղճ աշխարհեր ու կրակ :

( ) Ի մը երկու խելօք աղբար , Արոնց նրման սրչափներ կան , Չիւնէ փախած ու ցրտահար կ'երթան պանդոկ մը կը մտնան :

Պանդոկապետն արտորարով Բսոնց լաւ կրակ մը կը վառէ . Խնտումէն վեր վեր ցատքելով Խելօքին մէկը կը վազէ :

Թւեերը բաց , ոտքը բոպիկ կուրծքը տնկած կրակին վըրայ , կարծես շամիրի զարկած խորտիկ Խորովելու համար ըլլայ .

Մէկ մ'ալ կանչել կը սկըսի , « Ը , Ը , Ինչ անըզգամ չար կրակ է աս , Ըրեց մրկեց զիս ասիկայ .

Տանտէր , տանտէր , ինչ կրակ է աս » :

Մէկալ խելօք աղբարն ալ հոն Բայց չորս հինգ ոտք կեցած հեռու՝ Մէկդի թողած կրկնոց բաձկնս կը սկըսի նոր կերպ տաքնալու .

Պաղած գլխուն պէս ձեռքերն ալ կ'երկընցնէ կ'երկընցնէ , Բայց անհրնար կ'ըլլայ տաքնալ Սառ կը կըտրի ինչ որ ընէ .

« Ո՛հ , կը սկըսի սրտալ կանչել . Ինչ անըզգամ չար կրակ է աս . Ես կը սառիմ ձիւնէն եւել .

Տանտէր տանտէր , ինչ կրակ է աս » :

Պանդոկապետը կը համնի Ծփծաղելէն ու ժը կտրեր , « Կրակէս չէ աս զենը ձեզի , կ'ըսէ , խելօք իմ աղբարներ .

Դու երկու ոտք հեռու կեցիր Ար տաքնալու համար չայրիս . Դուն ալ իրեք ոտք մտակցիր Ար տաքնալու տեղ չըսառիս » :

« Բարնկող աղբարք դուք ազգասէր »  
« Բիչ մը հեռու՝ չըլլայ այրեք . »  
« Դուք ալ անհոգ պաղ աղբարներ »  
« Բիչ մը առաջ՝ որ չըսառիք » :